[199512]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«25» հունվար 2017 թ. **N** 6 - ա/1

ՏՆԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԵՊՔԻ ՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԲԱԺՆԻ) ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ՏՆԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԻ ՄԱՍԻՆ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1061-Ն որոշման 6-րդ կետի 1-ին ենթակետի՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Սահմանել՝

1) տնային այցելություն կատարելու մեթոդական ցուցումները՝ համաձայն հավելված N1-ի.

2) սոցիալական դեպքի վարման մեթոդական ցուցումները՝ համաձայն հավելված N2-ի.

3) սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) աշխատողների կողմից կատարած տնային այցելությունների թվի մասին ամսական հաշվետվության օրինակելի ձևը՝ համաձայն հավելված N3-ի:

2. Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի համայնքապետարանների) աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում համդիսացող սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների, այսուհետ՝ տարածքային մարմին) պետերին՝

1) սոցիալական աջակցություն հայցող ընտանիքների հետ աշխատելիս առաջնորդվել սույն հրամանի 1-ին կետով սահմանված մեթոդական ցուցումներով,

2) յուրաքանչյուր եռամսյակ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչություն ներկայացնել՝

ա. աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների ամփոփ նկարագիր.

բ. առաջարկություններ՝ սույն հրամանի 3-րդ կետով նախատեսված տեղեկատվական ենթահամակարգի կատարելագործման մասին.

3) սույն կետի 1-ին ենթակետով կազմակերված աշխատանքների ընթացքում առավել բարդ դեպքերի քննարկումները կազմակերպել համակարգող խորհրդի և(կամ) աջակցող ցանցի ներկայացուցիչների, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության մասնագետների հետ.

4) մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը և դեկտեմբերի 30-ը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչություն ներկայացնել տարածքային մարմնի աշխատողների սոցիալական աշխատանքի (սոցիալական դեպքի վարման) վերապատրաստման (թեմաներ, հարցադրումներ և այլն) կարիքները:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետին՝

1) մինչև 2017 թվականի հունվարի 31-ը ներկայացնել սույն հրամանի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված մեթոդական ցուցումներով նախատեսված սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգի ծրագրային ապահովման համար խնդրի նկարագիրը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի հունիսի 9-ի N86-Ա/1 հրամանի N1 հավելվածով սահմանված կարգի համաձայն.

2) մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը և դեկտեմբերի 30-ը սույն հրամանի 2-րդ կետով ստացված առաջարկությունների հաշվառմամբ՝

ա. առաջարկություն ներկայացնել սույն հրամանի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված մեթոդական ցուցումներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ.

բ. վերապատրաստման հայտ ներկայացնել աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ:

4. Սույն հրամանի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված մեթոդական ցուցումների՝ ընտանիքի սոցիալական կարիքների գնահատման էլեկտրոնային անձնագրի ձևավորմանը և տեղեկատվական ենթահամակարգի շահագործմանը վերաբերող դրույթները գործում են այնքանով, որքանով հնարավոր է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N 123-Ա/1 հրամանի N5 և N6 հավելվածներով սահմանված ձևերի հիման վրա մշակված և կիրառվող «Սոցիալական դեպքի վարում» տեղեկատվական ենթահամակարգով:

5. ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրենին՝ մինչև 2017 թվականի մարտի 31-ը առաջարկություն ներկայացնել սույն հրամանի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգի ծրագրային ապահովման համար խնդրի նկարագրի հիման վրա ծրագրային փաթեթի ստեղծման աշխատանքների ծավալի և ժամկետների վերաբերյալ:

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված N1
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2017 թվականի հունվարի 25 **N** 6 - Ա/հրամանի

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՏՆԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

I. ՏՆԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. Տնային այցելություն կատարելու մեթոդական ցուցումներով (այսուհետ՝ մեթոդական ցուցումներ) սահմանվում են տնային այցելության (այսուհետ՝ տունայց) կազմակերպման և իրականացման փուլերը, աշխատանքների բնույթը, բովանդակությունը, տեխնիկական կանոնները, տունայցի ընթացքում սոցիալական աջակցություն հայցողի (ստացողի, այսուհետ՝ դիմող) վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների ստացման մեթոդները, ինչպես նաև կարգավորվում են տունայցի հետ կապված այլ հարաբերություններ:

2. Տունայց կատարում են դիմողի և (կամ) նրա ընտանիքի սոցիալական և նյութական պայմանները ուսումնասիրելու և (կամ) համապատասխան սոցիալական ծառայությունը մատուցելու նպատակով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 40-42-րդ հոդվածներով սահմանված մասնագետները՝

1) Հայաստանի Հանրապետության մարզպետարանի, Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) սոցիալական աշխատանքի մասնագետները (այսուհետ սոցիալական աշխատող).

2) խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետները.

3) համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետները:

3. Օրենքով, մեթոդական ցուցումներով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում տունայցը կարող է կատարվել նաև այդ նպատակով ձևավորված և համապատասխան մասնագետներից բաղկացած խմբի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից:

4. Տունայցը սոցիալական աշխատողները կատարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1061-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելված N1-ի 5-րդ կետով սահմանված դեպքերում և 6-րդ կետով սահմանված ժամկետներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում և ժամկետներում:

5. Տունայցի հիմնական նպատակներն են՝

1) ձեռք բերել անհրաժեշտ տեղեկություններ ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակի և նյութական ապահովվածության մասին.

2) գնահատել՝

ա. դիմողի (ընտանիքի, ընտանիքի յուրաքանչյուր կամ որևէ անդամի) սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական խնդիրների հետ կապված կարիքները (այսուհետ դիմողի սոցիալական կարիք), դրանց լուծման համար առկա կարողությունները և հմտությունները, ինչպես նաև այդ կարողությունների և հմտությունների հետագա զարգացման հնարավորությունների առկայությունը կամ բացակայությունը.

բ. դիմողի (ընտանիքի, ընտանիքի յուրաքանչյուր կամ որևէ անդամի) կենսապայմանները, մասնավորապես՝ աղքատությունը, բնակության պայմանները, կենսագործունեության սահմանափակումները, ընտանիքում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը, ընտանեկան բռնության առկայությունը կամ բացակայությունը կամ դրա սպառնալիքը.

գ. դիմողի (ընտանիքի, ընտանիքի յուրաքանչյուր կամ որևէ անդամի) կենսապայմանների վրա՝ տրամադրված սոցիալական ծառայությունների ազդեցությունը.

3) առաջարկություն ներկայացնել՝

ա. սոցիալական դեպք բացելու կամ սոցիալական դեպքը փակելու կամ սոցիալական դեպքն այլ կազմակերպությանը փոխանցելու մասին.

բ. անհատական սոցիալական ծրագրում փոփոխություն կատարելու մասին.

գ. օրենքով սահմանված սոցիալական ծառայություն (սոցիալական աջակցություն) տրամադրելու կամ տրամադրելը դադարեցնելու կամ տրամադրելը մերժելու մասին.

4) իրականացնել Որոշման հավելված N1-ի 3-րդ կետի 13-րդ, 14-րդ և 17-րդ ենթակետերով սահմանված լիազորությունները.

5) մատուցել սոցիալական ծառայություն (սոցիալական աջակցություն)՝ տնային պայմաններում:

II. ՏՈՒՆԱՅՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

6. Տունայցի կազմակերպման և իրականացման փուլերն են.

1) տունայցի ծրագրավորումն ու նախապատրաստումը.

2) դիմողի փաստացի բնակության վայր այցելությունը (բուն տունայցի փուլ).

3) տունայցի արդյունքների ամփոփումն ու վերջնական գնահատումը:

7. Տունայցի ծրագրավորման ու նախապատրաստման փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները՝

1) մեթոդական ցուցումների 5-րդ կետի 1-4 ենթակետերով սահմանված նպատակներով կատարվող տունայցի դեպքում՝

ա. տունայցի նախապատրաստում, որը ենթադրում է դիմումներում (բողոքներում), Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1044-Ն որոշմամբ սահմանված համագործակցող կողմերից, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների կողմից ստացված ահազանգերում, այլ փաստաթղթերում առկա տեղեկությունների, տեղեկատվական համապատասխան շտեմարանների ուսումնասիրությամբ

դիմողների կենսապայմանների, ընտանիքի կազմի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված տվյալների հավաքագրում, հետազոտում և համապատասխան մարմիններից (կազմակերպություններից) դիմողին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լրացուցիչ տեղեկությունների ձեռքբերում.

բ. սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգում ընտանիքի սոցիալական կարիքների գնահատման էլեկտրոնային անձնագրի (այսուհետ՝ Ընտանիքի անձնագիր) ձևավորում (Ընտանիքի անձնագրում փոփոխությունների կատարում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N145-Ն որոշման 3-րդ հավելվածի N3 և N4 ձևերով հաստատված ընտանիքի սոցիալական անձնագրի հիմքով՝

գ. կատարվելիք տունայցերի դասակարգում՝ ըստ հնարավոր բարդության, հրատապության և հասցեների.

դ. դիմողների հետ տունայցի ժամկետների վերաբերյալ նախնական պայմանավորվածությունների ձեռք բերում, եթե տունայցի ժամկետների վերաբերյալ նախնական պայմանավորվածության ձեռք բերումը չի խոչընդոտի մեթոդական ցուցումների 5-րդ կետով սահմանված տեղեկությունների ձեռք բերմանը կամ տունայցի իրականացումը պայմանավորված չէ կարիքները բավարարելու ուղղությամբ իրականացվող քայլերն անհետաձգելի և(կամ) դեպքն անհետաձգելի լուծում պահանջող համարելու հանգամանքով.

ե. տունայցերի ժամանակացույցի սահմանում՝ հաշվի առնելով սույն ենթակետի «գ» և «դ» պարբերությունների պահանջները և դիմումներին (բողոքներին) պատասխանելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետները.

զ. տունայցի ձևաչափի ընտրություն (միայնակ կամ հանձնաժողովի կազմով).

է. տունայցի ընթացքում ուսումնասիրվելիք հնարավոր հարցերի քննարկում անմիջական ղեկավարի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ սոցիալական աշխատանքի այլ մասնագետների՝ այդ թվում այլ կազմակերպությունների, որոնց հետ առնչվել է դիմողը, իսկ այն դեպքում, երբ տունայցն իրականացվելու է հանձնաժողովի կազմով, ապա՝ նաև հանձնաժողովի անդամների հետ.

ը. սույն ենթակետի «է» պարբերությամբ նախատեսված քննարկումների արդյունքում ուսումնասիրության ենթակա հարցերի շրջանակի ճշտում.

2) մեթոդական ցուցումների 5-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված նպատակով կատարվող տունայցի դեպքում՝

ա. դիմողի հետ առաջին տունայցի ժամկետի վերաբերյալ նախնական պայմանավորվածության ձեռք բերում.

բ. տունայցերի կատարման՝ դիմողի հետ համաձայնեցված ժամանակացույցի, փոփոխությունների, տունայց կատարողի փոխարինման կամ տվյալ տունայցի կատարման անհնարինության մասին իրազեկում դիմողին:

8. Դիմողի փաստացի բնակության վայր այցելության (բուն տունայցի) փուլում մեթոդական ցուցումների 5-րդ կետի 1-4-րդ ենթակետերով սահմանված նպատակներով կատարվող տունայցի դեպքում՝ նախատեսվում է հարցազրույցի ու դիտարկման մեթոդներով հնարավորինս պարզել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N145-Ն որոշման 3-րդ հավելվածով սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու նպատակով դիմողի (ընտանիքի) հայտարարած տվյալները.

2) ընտանիքից մեկ ամսից ավելի ժամանակահատվածով բացակայող անձանց առկայությունը, բացակայության պատճառները, գտնվելու վայրը և այլ տեղեկություններ.

3) ընտանիքի յուրաքանչյուր անդամի զբաղվածությանը (աշխատանքին) վերաբերող տեղեկություններ.

4) ընտանիքի յուրաքանչյուր անդամի կրթական աստիճանը, կրթական ծառայությունների ստացման ուղղությամբ առկա խնդիրները, իսկ ընտանիքի դպրոցական և ուսանող անդամների վերաբերյալ՝ նաև ուսուցմանը և դրանց մատչելիությանը վերաբերող տեղեկություններ, այդ թվում՝ երեխաների նախադպրոցական հաստատությունում ներգրավված լինելու, հանրակրթական հաստատությունում սովորելու կամ չսովորելու հանգամանքը, չսովորելու դեպքում՝ դրա պատճառները, մասնագիտական (նախնական արհեստագործական, միջին, բարձրագույն) համապատասխան կրթություն ստանալու ցանկություններն ու դրա խոչընդոտները.

5) բնակության և կենցաղային պայմանները և կոմունալ-կենցաղային հարմարությունները, այդ թվում՝

ա. կացարանի սանիտարահիգիենիկ վիճակը.

բ. զբաղեցրած կացարանի տեսակը (առանձնատուն, բնակարան, հանրակացարան, տնակ, ժամանակավոր շինություն և այլն, այսուհետ նաև՝ կացարան), կամ անօթևան լինելու հանգամանքը, կացարանում բնակվելու դեպքում՝ կացարանի զբաղեցման հիմքերը (սեփականության, վարձակալության իրավունքով կամ այլ հիմունքներով), զբաղեցրած տարածքի չափը (քառակուսի մետրը՝ մեկ անձի հաշվարկով) և սենյակների թիվը.

գ. կացարանի ջրամատակարարման և ջրահեռացման, ջեռուցման, գազամատակարարման, օդափոխման համակարգերի, կապի ու հեռահաղորդակցության միջոցների առկայությունը և ծառայության մատակարարման որակը.

դ. կացարանի վերանորոգվածության աստիճանը (կարիքը կամ անհրաժեշտությունը).

ե. կացարանի կահավորվածությունը.

6) ընտանիքին սեփականության իրավունքով պատկանող գույքի կազմը, այդ թվում՝

ա. հողի՝ գյուղատնտեսական կամ այլ նշանակության հողամասերի առկայությունը, դրանց վիճակին և օգտագործմանը վերաբերող տեղեկություններ.

բ. այլ անշարժ գույքի (շենքերի, շինությունների, արտադրական տարածքների և այլն), փոխադրամիջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի (տրակտորներ, հացահատիկահավաք և կերահավաք կոմբայններ, խոտհնձիչներ, կալսիչ, հակավորող տրակտոր և այլն) առկայությունը, դրանց վիճակին և օգտագործմանը վերաբերող տեղեկություններ,

գ. անասնատեսակների առկայությունը, դրանց քանակը, անասնապահությամբ զբաղվելու հանգամանքը.

7) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հանգամանքը.

8) ընտանիքում առկա խնդիրները, այդ թվում՝

ա. տնտեսական դժվարությունները.

բ. առողջական խնդիրները, ընտանիքի յուրաքանչյուր անդամի առողջական վիճակը (ինքնագնահատականը), ընտանիքում քրոնիկ, երկարատև հիվանդություններ ունեցող անդամների առկայությունը, առողջապահական ծառայություններից օգտվելու մատչելիությունը, կենսագործունեության ինքնուրույն ապահովման (ինքնասպասարկման հմտությունների) հնարավորությունները կամ սահմանափակումները, այդ թվում՝ ընտանիքի անդամների ինքնուրույն տեղաշարժվելու, սանիտարահիգիենիկ պահանջմունքներն ինքնուրույնաբար հոգալու կարողությունների պահպանման աստիճանը, անձնական հիգիենայի մակարդակը, տեղաշարժման համար անհրաժեշտ տեխնիկական օժանդակ միջոցների (պրոթեզ, հենակներ, սայլակ և այլն) առկայությունը և դրանց կարիքը, հաղորդակցական կարիքները՝ դիմողի կողմից օգտագործվող հաղորդակցության միջոցներն ու դրանց արդյունավետությունը, հաղորդակցվելու համար անհրաժեշտ շտկողական ծառայությունների, վերականգնողական, տեխնիկական միջոցների և այլ օժանդակ սարքերի կարիքը, ինչպես նաև դրանց ստացման խոչընդոտները.

գ. իրավական խնդիրները, վճարովի կամ անվճար հիմունքներով համապատասխան իրավաբանական օգնության տրամադրման, գույքային իրավունքների հնարավոր ոտնահարման հանգամանքները, թմրանյութերի օգտագործման և (կամ) ոգելից խմիչքի չարաշահման հնարավոր դեպքերը.

դ. վարքը,

ե. բռնությունների, այդ թվում՝ ընտանեկան բռնության առկայությունը կամ դրա սպառնալիքը.

9) ընտանիքում տիրող միջանձնային հարաբերությունները, բարոյահոգեբանական մթնոլորտը, ընտանիքի որևէ անդամի մոտ հոգեբանական կամ հոգեկան խնդիրների առկայությունը, ընտանիքից որևէ անդամի բաժանման հնարավորությունը (ռիսկայնության աստիճանը՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում կամ շուրջօրյա խնամք տրամադրող այլ կազմակերպությունում հայտնվելու հնարավորությունը) և դրա պատճառները, երեխաների, հաշմանդամների ու տարեցների պաշտպանվածության մակարդակը,

10) ընտանիքի անդամների սնվածության վիճակը, թերսնուցման և ընտանիքում հատուկ սննդակարգից օգտվող անդամների առկայությունը.

11) ընտանիքի անդամների հագուստի մաշվածության մակարդակը, հագուստի համապատասխանությունը եղանակային պայմաններին.

12) ընտանիքի որևէ անդամի խնամքի կազմակերպումը (տրամադրումը) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում կամ այլ կազմակերպություններում, հաստատություններում, խնամատար ընտանիքում իրականացնելու հանգամանքը կամ դրա անհրաժեշտությունը.

13) դիմողի՝ երեխա որդեգրելու կամ խնամակալություն կամ հոգաբարձություն ստանձնելու ցանկություն կամ խնամատար ծնող դառնալու հնարավորության համար դիմելու դեպքում՝ այդպիսի ցանկության դրդապատճառները՝ ըստ դիմողի և դրանց անկեղծությունը՝ ըստ սոցիալական աշխատողի, անհրաժեշտ սոցիալ-տնտեսական, հոգեբանական և այլ պայմանների առկայությունը.

14) ընտանիքին կամ ընտանիքի որևէ անդամին սոցիալական ծառայություն տրամադրվելու հանգամանքը, դրա տեսակը, սոցիալական ծառայության տրամադրման մասին այլ անհրաժեշտ տեղեկություններ.

15) ընտանիքի ծրագրերը (հետագա պլանները, ձգտումները).

16) ընտանիքի ներգրավվածությունը սոցիալական միջավայրում՝ ընտանիքի անդամների շփումներն ու կապերն այլ անձանց (ընտանիքի բացակա անդամների, ազգականների, բարեկամների, հարևանների, ընկերների և այլն) ու կազմակերպությունների հետ, այդ թվում՝ վերջիններից օգնություններ ստանալու հանգամանքը.

17) իրենց սոցիալական իրավունքների մասին ընտանիքի անդամների իրազեկման մակարդակը.

18) ընտանիքի անդամների սոցիալական հիմնական խնդիրները, կարիքները (ինչպես ընտանիքի անդամների, այնպես էլ տունայց կատարողի կարծիքով):

9. Տունայցի ընթացքում հարցազրույցի և դիտարկման արդյունքում ստացված տեղեկությունները սոցիալական աշխատողը ներառում է Ընտանիքի անձնագիր կամ դրա անհնարինության դեպքում՝ կատարում գրառումներ:

10. Սոցիալական աշխատողը տունայցի արդյունքների ամփոփման ու վերջնական գնահատման փուլում, հաշվի առնելով նաև մեթոդական ցուցումների 47-րդ, 48-րդ և 49-րդ կետերով սահմանված պահանջները, ամփոփում է տունայցի ընթացքում ստացված տեղեկությունները և տվյալները, կազմում է էլեկտրոնային արձանագրություն, եզրակացություն, ընդ որում հանձնաժողովի կազմով տունայցի դեպքում կազմվում է ամփոփիչ արձանագրություն (թղթային կրիչով), որը ստորագրում են հանձնաժողովի այն անդամները, որոնք մասնակցել են կատարված տունայցին:

11.Մեթոդական ցուցումների 10-րդ կետով նախատեսված արձանագրության և եզրակացության հիման վրա սոցիալական աշխատողը ներկայացնում է առաջարկություններ՝

1) ընտանիքի կամ ընտանիքի անդամներից որևէ մեկի կամ մի քանիսի համար սոցիալական դեպք բացելու կամ փակելու կամ փոխանցելու մասին.

2) ընտանիքի կամ ընտանիքի անդամներից որևէ մեկի կամ մի քանիսի անհատական սոցիալական ծրագրում փոփոխություններ կատարելու մասին.

3) ընտանիքին սոցիալապես անապահով և Օրենքով սահմանված սոցիալական ծառայություն (սոցիալական աջակցություն) տրամադրելու մասին.

4) ընտանիքին սոցիալապես անապահով և նպաստառության ենթակա ճանաչելու մասին.

5) ընտանիքին սոցիալապես անապահով և եռամսյակային հրատապ օգնություն նշանակելու հարցը Օրենքով սահմանված համակարգող խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) քննարկմանը ներկայացնելու մասին.

6) ընտանիքին սոցիալապես անապահով, սակայն նպաստառության ոչ ենթակա ճանաչելու մասին.

7) դիմողին (դիմողի ընտանիքին) սոցիալական ծառայություն (սոցիալական աջակցություն) տրամադրելը մերժելու վերաբերյալ.

8) դիմողին (դիմողի ընտանիքին) սոցիալական ծառայություն (սոցիալական աջակցություն) տրամադրելը դադարեցնելու վերաբերյալ.

9) ընտանիքի խնդիրը Օրենքով սահմանված համակարգող խորհրդի քննարկմանը ներկայացնելու մասին.

10) Որոշման հավելված N1-ի 3-րդ կետի 14-րդ և 17-րդ ենթակետերով սահմանված դեպքերում և կարգով եզրակացություն ներկայացնելու վերաբերյալ.

11) ընտանիքին բարեկեցիկ ճանաչելու մասին:

12. Դիմողի փաստացի բնակության վայր այցելության (բուն տունայցի) փուլում մեթոդական ցուցումների 5-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված նպատակով՝

1) առաջին տունայցը կատարվում է խնամք տրամադրող կազմակերպության համապատասխան հանձնաժողովով, կազմելու և համաձայնեցնելու համար՝

ա. բժշկի, բուժքրոջ, սոցիալական աշխատողի, հոգեբանի և իրավաբանի այցելությունների ժամանակացույցը.

բ. խնամքի ծառայությունների ծավալը.

գ. տնային պայմաններում խնամքի տրամադրման պայմանագիրը.

2) հաջորդ տունայցերը կատարվում են համաձայնեցված ժամանակացույցով.

3) տունայցի ընթացքում խնամքի ծառայությունները տրամադրվում են սույն կետի 1-ին ենթակետով համաձայնեցված ծավալով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ սահմանված կարգով:

III ՏՈՒՆԱՅՑԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

13. Տունայցը կատարվում է միայնակ կամ հանձնաժողովի կազմով:

14. Տունայց կատարելու ընթացքում սոցիալական աշխատողը ղեկավարվում է սոցիալական աշխատողի էթիկայի կանոններով:

15. Տունայցն իրականացվում է հանձնաժողովի կողմից, եթե առկա են սույն կետում նշված պայմանները կամ դրանցից առնվազն մեկը՝

1) սոցիալական աշխատողը տունայցի արդյունքում դժվարանում է միայնակ եզրակացություն տալ դիմողի սոցիալական կարիքների վերաբերյալ կամ ձեռք բերել մեթոդական ցուցումների 5-րդ կետով սահմանված տեղեկությունները կամ դրանցից որևէ մեկը.

2) տունայցը սոցիալական աշխատողի կողմից միայնակ կատարելն անվտանգ չէ, այն է՝

ա. ընտանիքի անդամները կամ նրանցից որևէ մեկը դրսևորում է կամ նախկինում դրսևորել է ագրեսիվ վարքագիծ՝ վիրավորանքների և (կամ) հայհոյանքների և (կամ) սպառնալիքների և(կամ) ֆիզիկական հարձակման տեսքով.

բ. ընտանիքի անդամները (կամ նրանցից որևէ մեկը) թմրամոլ են(է) և(կամ) չարաշահում են(է) ալկոհոլի օգտագործումը.

գ. ընտանիքի բնակության վայրում կա այնպիսի կենդանի, որը կարող է սպառնալիք հանդիսանալ սոցիալական աշխատողի համար.

դ. առկա են այլ հիմնավոր պատճառներ տունայց միայնակ կատարելը որպես ռիսկային դիտարկելու համար.

3) առկա է սոցիալական աշխատողի կատարած դիտարկումների կամ եզրակացության վերաբերյալ դիմողի անհամաձայնությունը.

4) առաջանում է դիմողի սոցիալական կարիքները բազմամասնագիտական խմբի կողմից գնահատելու անհրաժեշտություն.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

16. Հանձնաժողովի կազմում, տվյալ տարածքը սպասարկող սոցիալական աշխատողից բացի կարող են ընդգրկվել նաև՝

1) նույն տարածքային մարմնի այլ աշխատողներ.

2) սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների՝ աջակցող ցանցի, այլ ներկայացուցիչներ.

3) խնամակալության և հոգաբարձության մարմինների ներկայացուցիչներ.

4) սույն կետի 2-րդ ենթակետում չնշված՝ պետական և տեղական ինքնակառավարման այլ մարմինների ներկայացուցիչներ:

17. Միայնակ տունայց կատարելու դեպքում, անկախ դրա ռիսկայնության աստիճանից, սոցիալական աշխատողը՝

1) իր անմիջական վերադասին է հանձնում տվյալ օրը կատարվելիք բոլոր տունայցերի ժամանակացույցը, նշելով այցելության ենթակա յուրաքանչյուր կացարանի հասցեն, տունայցի մոտավոր սկիզբը և ավարտը, կանխատեսված տևողությունը.

2) ճշտում է ոստիկանական այն բաժանմունքի (բաժանմունքների) հասցեն (հասցեները), որն (որոնք) առավել մոտ է (են) տեղակայված այն կացարանին (կացարաններին), ուր պետք է կատարվի այցելություն.

3) իր տրամադրության տակ է ունենում կապի հնարավոր միջոցներ:

18. Դիմողին այցելելիս սոցիալական աշխատողը ներկայացնում է վկայականը (պաշտոնական փաստաթուղթ) և բացատրում այցելության նպատակը, ապա դիմողից ստանում կացարանում որոշակի դիտարկումներ իրականացնելու համաձայնություն:

19. Տունայցը նախապես պլանավորածից շատ երկար չտևելու նպատակով դիմողին տրվում են հատուկ ուղղորդող հարցեր՝ նրան տրամադրելով անկեղծ զրույցի:

20. Եթե տունայցի ընթացքում առաջանում է դիմողի հետ վիճաբանության վտանգ կամ, անկախ սոցիալական աշխատողի կիրառած հմտություններից, դիմողը խուսափում է բնականոն շփման միջոցով տրամադրել անհրաժեշտ

տեղեկությունները, կամ տունայցի ընթացքում պարզվում է, որ առկա են սույն մեթոդական ցուցումների 15-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հիմքերը, ապա տունայցն ընդհատվում է և ձեռք է բերվում պայմանավորվածություն հետագայում կայանալիք տունայցի ժամկետների վերաբերյալ:

21. Տունայցը նպատակահարմար է ավարտել բարիդրացիական, փոխադարձ վստահության և համաձայնության մթնոլորտում, համագործակցության պատրաստակամությամբ՝ զերծ մնալով անհարկի խոստումներից:

IV. ՏՈՒՆԱՅՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԻՄՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

22. Դիմողների վերաբերյալ սույն մեթոդական ցուցումներով նախատեսված անհրաժեշտ տեղեկությունները տունայցի իրականացման ընթացքում ձեռք են բերվում (հավաքագրվում են) հարցազրույցի և դիտարկման մեթոդների կիրառմամբ:

23. Հարցազրույցի նպատակը սույն մեթոդական ցուցումների 5-րդ կետով սահմանված տեղեկությունների ձեռքբերումն է, որի համար նպատակաուղղված բանավոր զրույց է իրականացվում սոցիալական աշխատողի (հանձնաժողովի անդամների) և դիմողի միջև:

24. Հարցազրույցի ժամանակ հարցերը պետք է լինեն տրամաբանական, առանձին, հստակ, առանց ենթատեքստի, միանշանակ, կարճ (կարելի է երբեմն տալ բացատրություն)՝ չօգտագործելով նեղ մասնագիտական եզրույթներ, դրանք պետք է չլինեն խիստ հուզական կամ ներշնչող:

25. Դիտարկման մեթոդով հնարավորություն է ընձեռվում ճշտել, թե որքանով են դիմողի ներկայացրած տվյալները համապատասխանում իրականությանը, ինչպես նաև ստանալ անհրաժեշտ այնպիսի տեղեկություններ, որոնք հնարավոր չէ պարզել հարցազրույցի և փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով:

26. Հարցազրույցի միջոցով պարզելիք տեղեկությունների շրջանակը, յուրաքանչյուր դեպքի համար տարբեր է՝ պայմանավորված դիմողի խնդրով:

27. Հարցազրույցի մեթոդով ստացման ենթակա տեղեկությունների ընդհանուր շրջանակը սահմանված է մեթոդական ցուցումների 8-րդ կետի 2-րդ (ընտանիքի բացակայող անդամի մասին), 3-րդ (զբաղվածության), 4-րդ (կրթության մատչելություն և կարիքներ), 7-րդ (ձեռնարկատիրական գործունեություն), 12-րդ (խնամքի կարիք), 13-րդ (երեխա որդեգրելու կամ խնամակալություն կամ հոգաբարձություն ստանձնելու ցանկություն), 14-րդ (սոցիալական որևէ ծառայություն տրամադրելու), 15-րդ (ընտանիքի հետագա ծրագրեր), 16-րդ (ընտանիքի կապերը սոցիալական միջավայրում), 17-րդ (իրավունքի իրազեկվածության մակարդակ), 18-րդ ենթակետերով (սոցիալական կարիքները), 8-րդ ենթակետի «ա» (առողջական խնդիրներ), «գ» (իրավական խնդիրներ) և «դ» (վարքը) պարբերություններով:

28. Դիտարկման մեթոդով ստացման ենթակա տեղեկությունների ընդհանուր շրջանակը սահմանված է մեթոդական ցուցումների 8-րդ կետի 5-րդ ենթակետի

«ա» (կացարանի սանիտարահիգիենիկ վիճակ), «դ» (կացարանի վերանորոգվածություն) և «ե» (կացարանի կահավորվածություն) պարբերություններով, 11-րդ ենթակետով (հագուստի վիճակը):

29. Մեթոդական ցուցումների 8-րդ կետի 1-ին (դիմում-հայտարարագրում ներառված տվյալներ), 6-րդ (սեփականության իրավունքով պատկանող գույք), 9-րդ (միջանձնային հարաբերություններ), 10-րդ (սնվածության մակարդակ) և 18-րդ (սոցիալական կարիքներ) ենթակետերով, 5-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով, 8-րդ ենթակետի «բ» (առողջական խնդիրներ) և «ե» (բռնություն) պարբերություններով սահմանված տեղեկությունները ստացվում են ինչպես հարցազրույցի, այնպես էլ դիտարկման միջոցով:

30. Հարզազրույցի ընթացքում սոցիալական աշխատողը ձեռք բերած տվյալները ներառում է սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգ՝ դյուրակիր համակարգչային տեխնիկայի (այսուհետ՝ պլանշետ) միջոցով և (կամ) ըստ անհրաժեշտության կատարում է նշումներ, գրառումներ, որոնք ապահովում են հարցազրույցի միջոցով ստացված տեղեկությունների պահպանումն ու Ընտանիքի անձնագրում դրանց հետագա ներառումը:

31. Հարցազրույցի միջոցով ճշտվում են նաև.

1) դիմումի (բողոքի) առկայության դեպքում՝ դիմումով (բողոքով) բարձրացված խնդիրը և դիմողի կողմից ներկայացված պահանջը.

2) դիմողի խնդրի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունների վերաբերմունքը (ու՞մ է դիմել դիմողը և ի՞նչ պատասխաններ է ստացել):

32. Հարցազրույցի միջոցով հնարավորինս ստուգվում են նաև դիմողի կողմից ներկայացվող տվյալների համապատասխանությունն այլ մարմիններից կամ կազմակերպություններից ստացված տվյալներին:

33. Ըստ անհրաժեշտության, համապատասխան հանգամանքների առկայության դեպքում, սոցիալական աշխատողը (հանձնաժողովը) դիմողից հայցում է տրամադրել նաև վերջինիս ներկայացրած տեղեկությունները հավաստող որոշակի փաստաթղթեր՝ առողջական վիճակի, ընտանիքին սոցիալական ծառայություններ տրամադրելու կամ մերժելու մասին գրություններ և այլն:

34. Դիմողի սոցիալ-տնտեսական, սոցիալ-կենցաղային վիճակը նկարագրելու նպատակով ճշտվում է նաև ներկա սոցիալական վիճակին հասնելու նախապատմությունը (սոցիալական պատմությունը):

35. Դիտարկման միջոցով սույն մեթոդական ցուցումների 8-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը պարզելու նպատակով, մասնավորապես անհրաժեշտ է ուշադրության արժանացնել կացարանի սանիտարահիգիենիկ պայմաններին, սանհանգույցի առկայությանը, դրա՝ կացարանի ներսում կամ դրսում լինելու և այլ հանգամանքներին:

36. Դիտարկման միջոցով սույն մեթոդական ցուցումների 8-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը պարզելու շրջանակներում, անհրաժեշտ է մասնավորապես ուշադրության արժանացնել ջրամատակարարման ռեժիմին, ջրի աղբյուրի և սանհանգույցի՝ կացարանի ներսում կամ դրսում լինելու հանգամանքին, ջեռուցման համակարգի փաստացի

աշխատելուն, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մաշվածությանը, դրանց վթարայնության աստիճանին, ջեռուցման համակարգի բացակայության կամ փաստացի չաշխատելու դեպքում՝ վառելանյութի (քարածուխ, փայտ, աթար և այլն) բավարար պաշարի առկայությանը, տեսակին:

37. Դիտարկման միջոցով սույն մեթոդական ցուցումների 8-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը պարզելու շրջանակներում անհրաժեշտ է մասնավորապես ուշադրության արժանացնել՝

1) մուտքի դռան որակական կատեգորիային.

2) պաստառների կամ պատերի առաստաղի ներկի թարմությանը.

3) հատակի վիճակին, մասնավորապես՝ ծածկույթի տեսակին (մանրահատակ, փայտամած, լինոլեում, բետոն, հող և այլն), որակին, թարմությանը.

4) պատուհանների առկայությանը և դրանց որակին.

5) ընթացող կամ պատրաստվող շին-վերանորոգման աշխատանքներին (պատրաստվող աշխատանքների մասին կարող են վկայել նաև կացարանում կամ բակում շինանյութերի առկայությունը).

6) առանձնատների դեպքում՝ նաև տանիքի վերանորոգվածության աստիճանին, տանիքի նյութին և թարմությանը, լուսամուտների ապակեպատման առկայությանը, բակի և շրջակայքի բարեկարգվածությանը.

7) տնամերձ հողամասի մշակվածությանը:

38. Դիտարկման միջոցով սույն մեթոդական ցուցումների 8-րդ կետի 5-րդ ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը պարզելու շրջանակներում անհրաժեշտ է մասնավորապես ուշադրության արժանացնել՝

1) կահույքի առկայությանը, մաշվածության աստիճանին.

2) կացարանում ջահերի առկայությանը, դրանց որակին, դրանց օգտագործման հանգամանքին.

3) կենցաղային տեխնիկայի (համակարգիչ, արբանյակային ալեհավաք, հեռուստառադիոտեխնիկա, երաժշտական կենտրոն և այլն) առկայությանը, դրանց օգտագործման հանգամանքին.

4) սանհանգույցի ու խոհանոցի կենցաղային պայմաններին, դրանց վերանորոգվածության ու կահավորվածության աստիճանին, կենցաղային առարկաների (սառնարան, ջեռուցման կաթսա, ավտոմատ լվացքի մեքենա, խոհանոցային կոմբայն և այլ սարքավորումներ, խոհանոցային կահույք և այլն) առկայությանը, դրանց օգտագործման հանգամանքին:

39. Դիտարկման միջոցով մեթոդական ցուցումների 8-րդ կետի 11-րդ (հագուստի վիճակը) ենթակետով սահմանված տեղեկատվությունը պարզելու շրջանակներում անհրաժեշտ է մասնավորապես ուշադրության արժանացնել հագուստների որակին, թե ինչքանով են դրանք համապատասխանում տարվա եղանակին և(կամ) կացարանում տիրող ջերմաստիճանին, դրանց մաշվածությանը, մաքրության աստիճանին:

40. Մեթոդական ցուցումների 8-րդ կետի 8-րդ ենթակետի «բ» պարբերությամբ (առողջական խնդիրներ) սահմանված տեղեկատվությունը պարզելու շրջանակներում անհրաժեշտ է մասնավորապես ուշադրության արժանացնել՝

1) դիմողի առողջ կամ հիվանդագին, գունատ դեմք ունենալուն.

2) դիմողի լիքը կամ նիհար (հյուծված) տեսք ունենալուն.

3) դիմողի կողմից իր առողջական վիճակի մասին արտահայտված գանգատներին.

4) դիմողի մոտ վնասվածքների առկայությանը.

5) դիմողի մոտ ինքնասպասարկման հմտությունների առկայությանը կամ դրա սահմանափակումը կամ բացակայությունը վկայող նշաններին.

6) դիմողի հաղորդակցվելու (խոսելու, տեսնելու և լսելու) դժվարություններին.

7) առանց սահմանափակումների հաղորդակցվելու համար անհրաժեշտ պարագաների առկայությանը կամ բացակայությանը.

8) դիմողի կողմից օգտագործվող հաղորդակցության տեխնիկական միջոցների արդյունավետությանը.

9) որևէ գործով զբաղվելու ցանկության բացակայությանը, հետաքրքրության, նախասիրությունների ու եռանդի նվազման միտումներին.

10) ինքնասպանության մասին մտքերի արտահայտմանը.

11) սովորականից ավելի մոռացկոտ ու ցրված լինելու նշաններին.

12) տանից դուրս գալուց մոլորվելու դեպքերին.

13) թվացյալ և անիրական ձայներ լսելու կամ պատկերներ տեսնելու դեպքերին.

14) վրդովվելու, անհանգստանալու պատճառներին, առիթներին:

41. Մեթոդական ցուցումների 8-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված տեղեկատվությունը պարզելու շրջանակներում անհրաժեշտ է մասնավորապես ուշադրության արժանացնել ընտանիքի անդամների փոխհարաբերությունների վիճակին, լարվածության, հանգիստ կամ նյարդային շարժուձևի առկայությանը, ագրեսիվ տրամադրություններին և վարքագծին:

42. Դիտարկման միջոցով ընտանիքի վիճակի մասին ամբողջական պատկեր կազմելու նպատակով նրբանկատորեն անհրաժեշտ է լինել կացարանի բոլոր հարկերում և սենյակներում:

43. Դիտարկման ընթացքում ճշտվում է նաև դիմողի տան բակում առկա օժանդակ շինությունների առկայությունը, դրանց չափերը, վիճակը (վերանորոգված, լավ կահավորված, կիսակառույց, վթարային և այլն), արտադրական սարքավորումների առկայությունը, դրանց օգտագործելիությունը և այլ հանգամանքները, շարժական գույքի առկայությունը՝ ավտոմեքենա, գյուղատնտեսական մեքենաներ կամ այլ արտադրական տեխնիկա, ինչի գոյության մասին կարող են հուշել նաև պահեստամասերի առկայությունը և այլն:

V. ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԼՈՒԾՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ԽՆԴՐԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ՏՈՒՆԱՅՑՆ ԱՆՀԱՊԱՂ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

44. Բանավոր, գրավոր դիմումներից, ահազանգերից, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներից, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված տեղեկությունները (այսուհետ՝ ահազանգ) համարվում են արտակարգ իրավիճակի կամ անհետաձգելի լուծում պահանջող խնդրի (կյանքին և

առողջությանը վտանգ սպառնացող դեպքերի) մասին վկայող և տնային այցելությունը կազմակերպվում է անհապաղ, եթե այդ տեղեկություններում առկա են անձի (ընտանիքի) անձնական տվյալները և (կամ) գտնվելու փաստացի վայրը և դրանցում ուղղակիորեն մատնանշվում է՝

1) անձի (ընտանիքի) կյանքին և առողջությանը վտանգ սպառնալու, այդ թվում՝ սույն ենթակետի «ա», «բ» և «գ» պարբերություններում նշված մեկ կամ մի քանի հանգամանքների հնարավոր առկայության մասին, այն է՝

ա. ինքնասպանության գործելու կամ հասցնելու կամ հակելու մտադրության կամ նախապատրաստության կամ հանցափորձի,

բ. առողջությանը վնաս հասցնելու, ծեծի, հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու, արհեստական վիժում կատարելուն հարկադրելու մտադրության կամ նախապատրաստության կամ հանցափորձի.

գ. անձի փաստացի բնակության վայր հանդիսացող կացարանի (առանձնատան, բնակարանի, հանրակացարանային սենյակի, տնակի, ժամանակավոր շինության կամ այլ բնակելի կամ ոչ բնակելի տարածքի) լրիվ կամ մասնակի փլուզման իրական սպառնալիքի.

2) անձի՝ անհրաժեշտ խնամք չստանալու և

ա. ինքնասպասարկման և (կամ) ակտիվ տեղաշարժվելու ունակության խիստ սահմանափակմամբ կամ կորստով պայմանավորված՝ իր հիմնական պահանջմունքներն ինքնուրույն բավարարելու անկարողության կամ

բ. օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված լինելու մասին.

3) երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնացած լինելու հանգամանքը՝ այլ անձանցից (ընտանիքի անդամներ, ազգականներ, հարևաններ) կամ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններից խնամք չստանալու դեպքում.

4) հոգեկան առողջության կամ մտավոր այնպիսի խնդիրների առկայությունը, որը կարող է իրական վտանգ ներկայացնել տվյալ անձի կամ նրա ընտանիքի անդամների կամ հասարակության այլ անդամների համար.

5) ընտանեկան բռնության հնարավոր առկայությունը.

6) մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հնարավոր առկայությունը կամ վտանգը.

7) հրդեհի կամ խոշոր վթարի կամ վտանգավոր բնական երևույթի կամ տեխնածին կամ տարերային աղետի հետևանքով անձի (ընտանիքի) անօթևան մնալու մասին, բացառությամբ համայնքային, մարզային, հանրապետական և անդրսահմանային նշանակության արտակարգ իրավիճակների:

45. Մեթոդական ցուցումների 44-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դեպքում, սոցիալական աշխատողն այդ մասին անմիջապես իրազեկում է նաև ոստիկանությանը:

46. Մեթոդական ցուցումների 44-րդ կետով սահմանված չափորոշիչները սպառիչ չեն: Տունայցն անհապաղ իրականացվում է բոլոր այն դեպքերում, երբ սոցիալական աշխատողը ստացված տեղեկատվությամբ հնարավոր է համարում անձի (ընտանիքի) կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը և սոցիալական ծառայությունների անհապաղ տրամադրման հնարավորությունների ստեղծման անհրաժեշտությունը:

VI. ՏՈՒՆԱՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

47. Տունայցի ընթացքում ստացված տեղեկությունների ամփոփման ու վերջնական եզրակացության համար սոցիալական աշխատողի կողմից կազմվում է ընտանիքի սոցիալական պատմությունը, ազատ տեքստով՝ զերծ մնալով չհիմնավորված ենթադրություններից և կարծիքներից, հիմնվելով բացառապես փաստական հանգամանքների վրա:

48. Դիմողի սոցիալական վիճակի մասին տեղեկություններն ամբողջացնելու նպատակով սոցիալական աշխատողը (հանձնաժողովի անդամները) կարող է (կարող են) զրուցել նաև դիմողի ազգականների, բարեկամների, հարևանների, համայնքի այլ ներկայացուցիչների հետ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ անհրաժեշտ տեղեկություններ դիմողի սոցիալական խնդիրների հետ առնչություններ ունեցող այլ համապատասխան մարմիններից (կազմակերպություններից) և այլն:

49. Դիմողի մասին անհրաժեշտ տեղեկությունների ամբողջացումից հետո է միայն հնարավոր ձեռնամուխ լինել նրա վիճակի գնահատմանը, որը ենթադրում է՝

1) դիմողի խնդիրների ներկայացում իր՝ դիմողի տեսանկյունից.

2) դիմողի իրական խնդիրների ներկայացում տունայցի միջոցով ձեռք բերված, ինչպես նաև այլ տեղեկությունների համադրման արդյունքում ստացված տվյալների հիման վրա՝ ընդգծելով դիմողի վիճակը բնութագրող տիպական փաստեր:

50. Ընդ որում Ընտանիքի անձնագիրը կարող է լրացվել կատարված մեկից ավելի տունայցերի արդյունքում:

51. Տունայցերի մասին հաշվետվությունների կազմման ու ներկայացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի N 1183-Ն որոշմամբ:

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2017 թվականի հունվարի 25-ի **N** 6 - Ա/հրամանի

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԵՊՔԻ ՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սոցիալական դեպքի վարման (այսուհետ՝ դեպքի վարում) մեթոդական ցուցումներով (այսուհետ՝ մեթոդական ցուցում) կարգավորվում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանի, Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի, այսուհետ՝ տարածքային մարմին) սոցիալական աշխատանքի մասնագետների (այսուհետ՝ դեպք վարող) կողմից համագործակցության և հասանելի ռեսուրսների որոնման միջոցով և անձի (ընտանիքի) սոցիալական կարիքների գնահատման հիման վրա իրականացվող գործընթացի, ինչպես նաև սոցիալական ծառայությունների տրամադրման կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Դեպքի վարման ընթացքում տրամադրվող սոցիալական ծառայությունները հնարավորինս պետք է անդրադառնան դիմողի կարիքների ողջ բազմազանությանը և հաշվի առնեն այդ կարիքների փոփոխությունները ժամանակի ընթացքում:

3. Դեպքի վարման ընթացքում ձեռք բերված տեղեկությունները չեն կարող օգտագործվել դրանց ձեռքբերման նպատակից բացի այլ նպատակներով և դրանք չի թույլատրվում հայտնել տվյալ սոցիալական դեպքի հետ առնչություն չունեցող այլ անձանց, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

4. Աջակցող ցանցի անդամները պահպանում են դեպքի վարման ընթացքում ձեռք բերված՝ դիմողի անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության գաղտնիությունը:

5. Դեպք վարողը՝

1) աջակցում է դիմողին և նրա մասին հոգ տանող անձանց, հաղթահարելու որոշակի ընթացակարգերի կամ սահմանափակ անձնական ռեսուրսների հետ կապված, այդ թվում՝ տնտեսական և մշակութային բնույթի խոչընդոտները, ինչպես նաև օգտվելու անհրաժեշտ սոցիալական ծառայություններից.

2) հետևում է տարբեր մարմինների կամ կազմակերպությունների կողմից մատուցվող սոցիալական ծառայությունները պատշաճ, ժամանակին տրամադրելու գործընթացին.

3) ապահովում է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք), Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1044-Ն և N1061-Ն

որոշումներով սահմանված դեպք վարողին վերապահված լիազորությունների իրականացումը.

4) կազմում է դիմողի սոցիալական գործը (էլեկտրոնային և (կամ) թղթային կրիչով), որում ներառվում են դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները (և (կամ) առցանց եղանակով ստացված տվյալները), ինչպես նաև դեպք վարողի կողմից հավաքագրված այլ տվյալներ.

5) իրականացնում է դեպքի վարման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

II. ԴԵՊՔԻ ՎԱՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

6. Դեպքի վարման հիմնական փուլերն են.

1) դեպքի բացում և սոցիալական կարիքների գնահատում.

2) անհատական սոցիալական ծրագրի կազմում և համապատասխան սոցիալական ծառայությունների (դրանց փաթեթի) որոշում, անհատական սոցիալական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում կամ կազմակերպում՝ այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների դեպքում ուղղորդում՝ այդ կազմակերպություն.

3) սոցիալական ուղեկցում՝ անհատական սոցիալական ծրագրի կատարման հսկողություն, ակնկալվող արդյունքների ընթացիկ գնահատում, անհատական սոցիալական ծրագրում համապատասխան փոփոխությունների կատարում՝ հաշվի առնելով դիմողի սոցիալական կարիքների փոփոխությունները և սոցիալական դեպքի վարման գործընթացում ներգրավված անձանց (մասնագետների) դիրքորոշումը.

4) իրավիճակի փոփոխության գնահատում, տրամադրված սոցիալական ծառայությունների ազդեցության, ակնկալվող արդյունքների գնահատում՝ դեպքի փակում կամ փոխանցում այլ կազմակերպության և շարունակական հսկողություն:

III. ԴԵՊՔԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

7. Սոցիալական աջակցություն հայցողի սոցիալական կարիքների նախնական գնահատման հիման վրա դեպք վարողի առաջարկությամբ տարածքային մարմնի ղեկավարն ընդունում է որոշում սոցիալական աջակցություն հայցողի կամ նրա ընտանիքի համապատասխան անդամի (այսուհետ՝ դիմող) համար սոցիալական դեպք բացել:

8. Դեպքի վարումը սկսվում է դիմողի սոցիալական կարիքների գնահատումից, որը ենթադրում է դիմողի սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, ընտանեկան պայմանների, նյութական ապահովվածության վիճակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության հավաքագրում, օբյեկտիվ և մասնագիտական գնահատումների և ընտանիքի անդամների, բարեկամների, հարազատների կամ շրջապատի համապատասխան անձանց (սոցիալական

միկրոմիջավայր) սուբյեկտիվ գնահատականների (ընկալվող խնդիրների) համադրում:

9. Դեպք վարողը դիմողի խնդիրը գնահատում է որպես սոցիալական կարիք, երբ՝

1) դիմողն իր սոցիալական իրավունքների իրացման ժամանակ չունի անհրաժեշտ հմտություն և կարողություն ակնկալվող անհրաժեշտ գործողություններն իրականացնելու համար, ընդ որում դիմողը, նրա սոցիալական միկրոմիջավայրը (ընտանիքը, հարազատները, հարևանները կամ բարեկամները՝ ոչ ֆորմալ աջակցող ցանց), կարող են ընդունել կամ չընդունել սոցիալական կարիքի առկայությունը.

2) սոցիալական կարիքը բացակայում է, սակայն առկա են բավարար հիմքեր ապագայում դրա առաջացման հավանականությունը կանխատեսելու համար.

3) սոցիալական կարիքն առկա է, և հավանական է, որ ապագայում կարող են առաջանալ այլ՝ ավելի ծանր, սոցիալական կարիքներ.

4) առկա է քրոնիկ սոցիալական խնդիր, որի հետ կապված խնդիրներն ապագայում կարող են առաջացնել այլ՝ ավելի ծանր, սոցիալական կարիքներ:

10. Սոցիալական կարիքը գնահատելիս հաշվի են առնվում դիմողի սոցիալական խնդիրները, ինչպես նաև նրա և ընտանիքի սոցիալական ռեսուրսները:

11. Սոցիալական խնդիրները հիմնականում հետևյալն են.

1) ֆինանսական խնդիրներ, նյութական անբավարարություն.

2) բնակարանային պայմանների բարելավման (մշտական բնակության վայր չունեցող, ժամանակավոր կացարանում բնակվող կամ գերբնակեցված կացարանի բնակիչ և այլն) խնդիր.

3) բնակարանային՝ կենցաղային, կոմունալ և սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններ.

4) առանց խնամքի մնացած լինելը (առանց ծնողական խնամքի մնացած երեխա կամ չափահաս՝ տարեց և(կամ) հաշմանդամություն ունեցող անձի անբավարար մակարդակի խնամքի առկայություն).

5) գործազրկություն.

6) սոցիալական մեկուսացում՝ անտեսում սոցիալական միկրոմիջավայրի կողմից.

7) առողջական խնդիրներ (քրոնիկ և(կամ) երկարատև հիվանդություն կամ հաշմանդամություն).

8) հոգեկան առողջության կամ մտավոր խնդիրներ.

9) բռնություն ընտանիքում՝ կնոջ, երեխայի, հաշմանդամի, տարեցի կամ այլ անդամի նկատմամբ.

10) թմրամիջոցների օգտագործում և(կամ) ալկոհոլի չարաշահում.

11) իրավական բնույթի խնդիրներ.

12) կրթական խոցելիություն, խնդիրներ և բարդություններ, այդ թվում՝ նախադպրոցական հաստատություն կամ հանրակրթական դպրոց չհաճախող կամ անկանոն հաճախող կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առկայություն.

13) ինքնասպասարկման սահմանափակումների առկայություն կամ ինքնասպասարկման հմտությունների բացակայություն.

14) կոնֆլիկտներ՝ ներընտանեկան կամ սոցիալական միկրոմիջավայրում:

12. Դեպք վարողն առկա ռիսկերի, դիմողի սոցիալական կարիքների գնահատման և նրա իրավունքների իրացման վերահսկման գործընթացում կարող է մասնակից դարձնել դիմողի որոշակի խնդիրների լուծմանն առնչվող համապատասխան կազմակերպության մասնագետների (ֆորմալ աջակցող ցանց), որոնց ընտրությունն իրականացվում է պատշաճ կերպով՝ ելնելով օբյեկտիվ անհրաժեշտությունից և դիմողի լավագույն շահերից: Գործընթացին մասնակից մասնագետի եզրակացությունը հիմք է ընդունվում սոցիալական կարիքի գնահատման և իրավունքների իրացման ժամանակ:

13. Դիմողի սոցիալական կարիքների գնահատման հարցում (դեպքի վարման տեսանկյունից) գործում են հետևյալ սկզբունքները.

1) սոցիալական կարիքի ներկայացումը դիմողի տեսանկյունից.

2) սոցիալական կարիքի ներկայացումը դեպք վարողի տեսանկյունից.

3) սոցիալական կարիքի ճանաչումն ինչպես դեպք վարողի, այնպես էլ աջակցող ցանցի անդամների կողմից.

4) սոցիալական կարիքի գնահատմանը դիմողի և վերջինիս սոցիալական միկրոմիջավայրի մասնակցությունը.

5) խնդրի լուծման հարցում դիմողի և նրա սոցիալական միկրոմիջավայրի որոշակի դերակատարումը:

IV. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՅԼԵՐՆ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ԴԵՊՔԸ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԼՈՒԾՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

14. Սոցիալական կարիքները բավարարելու ուղղությամբ իրականացվող քայլերն անհետաձգելի համարելու, դեպքը անհետաձգելի լուծում պահանջող համարելու հիմնական չափորոշիչներն են.

1) տունայցը կատարվում է բանավոր դիմումների, ահազանգերի հիման վրա, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներում (այսուհետ՝ ահազանգ) նշված անձի (ընտանիքի) անձնական տվյալների և (կամ) գտնվելու վայրի մասին տեղեկություն ստանալու հիման վրա.

2) դիմողի կամ ահազանգում նշված անձի միայնակ բնակվելը և այլ անձի կողմից մշտական խնամքի կարիք ունենալը (ինքնասպասարկման ունակությունների խիստ սահմանափակումը կամ բացակայությունը).

3) դիմողի կամ ահազանգում նշված անձի առանց խնամքի մնացած լինելը՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխա կամ չափահաս՝ տարեց և(կամ) հաշմանդամություն ունեցող անձի անբավարար մակարդակի խնամքի առկայությունը.

4) դիմողի կամ ահազանգում նշված անձի հոգեկան առողջության կամ մտավոր խնդիրների առկայությունը, որը սպառնում է իր կամ ընտանիքի այլ անդամների ֆիզիկական կամ հոգեբանական անվտանգությանը.

5) ընտանիքում՝ կնոջ, երեխայի, հաշմանդամի, տարեցի կամ այլ անդամի նկատմամբ բռնության հիմնավոր կասկածը, որը սպառնում է բռնության ենթարկվող անձի կյանքին և առողջությանը:

15. Մեթոդական ցուցումների 14-րդ կետով սահմանված չափորոշիչները սպառիչ չեն:

16. Սոցիալական կարիքները բավարարելու ուղղությամբ իրականացվող քայլերն անհետաձգելի համարելու, դեպքն անհետաձգելի լուծում պահանջող համարելու որոշումը կայացվում է տունայցի ժամանակ դեպք վարողի կամ հանձնաժողովի կողմից՝ մեթոդական ցուցումների 14-րդ կետով սահմանված չափորոշիչներից առնվազն մեկի առկայության դեպքում, բացառությամբ՝ նույն կետի 1-ին ենթակետի:

17. Կայացրած որոշման մասին սոցիալական աշխատողը կամ հանձնաժողովն անմիջական ղեկավարին և, ըստ անհրաժեշտության, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշմամբ սահմանված համապատասխան համագործակցող կողմին տեղեկացնում է գրավոր՝ թղթային կամ էլեկտրոնային կամ հեռախոսա-կապով՝ անհապաղ կամ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը:

V. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒՄ

18. Դիմողի սոցիալական կարիքների գնահատման արդյունքում կազմվում է անհատական սոցիալական ծրագիր (այսուհետ՝ անհատական ծրագիր):

19. Դիմողի անհատական ծրագիրը ներառում է.

1) դիմողի սոցիալական կարիքները (սոցիալական կարիքների նկարագիրը).

2) դիմողի սոցիալական կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տեսակները, առաջարկված միջոցառումները, դրանց տրամադրման ժամկետներն ու ակնկալվող արդյունքները.

3) այլ կազմակերպությունների համապատասխան աշխատողների՝ մասնագետների (բազմամասնագիտական խումբ) տվյալները.

4) սոցիալական դեպքի խմբային (բազմամասնագիտական) քննարկումների պլանավորումը.

5) սոցիալական դեպքի ուղեկցման՝ շարունակական հսկողության ժամանակացույցը.

6) անհատական ծրագրի փակման նկարագրությունը, արդյունքները և հիմքը.

7) ըստ անհրաժեշտության՝ այլ տվյալներ:

20. Անհատական ծրագրում դեպք վարողը ներառում է նաև իր նկատառումները դիմողի՝ իր սոցիալական խնդիրների լուծման հարցում, վարքագծի մասին, նկարագրում է դիմողի սոցիալական պատմությունը, նրա հիմնական կարիքները՝ դեպք վարողի տեսանկյունից:

21. Անհատական ծրագրում նշվում են այն անձանց, ընտանիքների մասին տեղեկություններ, որոնք դիմողին տրամադրում են որոշակի աջակցություն:

22. Անհատական ծրագիրը ստորագրվում է (էլեկտրոնային ծրագրում՝ հաստատվում է) դեպք վարողի կողմից:

23. Անհատական ծրագիրը մատչելի (հասանելի) է բազմամասնագիտական խմբի անդամներին, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

VI. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՂԵԿՑՈՒՄ

24. Սոցիալական ուղեկցումն իրականացվում է տունայցերի կամ դիմողի հետ հեռախոսակապի կամ բազմամասնագիտական խմբի համապատասխան անդամների կամ աջակցող այլ անձանց հետ կապի միջոցով (այսուհետ՝ հանդիպում) և քննարկումների միջոցով:

25. Դեպք վարողն իրականացնում է անհատական սոցիալական ծրագրում ներառված միջոցառումների ընթացիկ գնահատում:

26. Անհատական ծրագրով նախատեսված միջոցառումները, այդ թվում ակնկալվող արդյունքները կամ սոցիալական կարիքները կարող են փոփոխվել դրա իրականացման ընթացքում:

27. Անհատական ծրագրի իրականացման ընթացքում գնահատված բոլոր փոփոխությունների մասին տեղեկությունները տրամադրվում են անհատական ծրագրին մասնակցող մասնագետներին:

28. Դեպք վարողը կազմակերպում է անհատական ծրագրին մասնակցող մասնագետների՝ բազմամասնագիտական խմբի, հետ դեպքի քննարկումները՝ անհատական ծրագրով նախատեսված ժամկետներում կամ ըստ անհրաժեշտության:

29. Դեպք վարողը հանդիպումները կազմակերպում է առաջին վեց ամիսների ընթացքում՝ առնվազն ամսական պարբերականությամբ, իսկ դրանից հետո՝ ըստ դեպքի զարգացման ընթացքի:

30. Անհատական ծրագրի արդյունքները կարող են լինել օբյեկտիվ՝ չափելի (քանակական), և սուբյեկտիվ:

31. Անհատական ծրագրի օբյեկտիվ արդյունքը գնահատվում է մի շարք քանակական ցուցանիշներով՝

1) հանդիպումների և քննարկումների թիվ, դրանց պարբերականություն.
2) տրամադրվող սոցիալական ծառայությունների թիվ և դրանց տրամադրման ժամկետները.
3) դեպքի վարման ժամկետ՝ ամիսներով.
4) դեպքի վարման գործընթացը նկարագրող այլ քանակական ցուցանիշներ՝ որպես սոցիալական պաշտպանության (բնակչությանը սոցիալական ծառայություններ տրամադրելու) ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համակարգի բաղկացուցիչ մաս:

32. Անհատական ծրագրի սուբյեկտիվ արդյունքը (ընկալվող որակը) գնահատվում է անհատական ծրագրի մասնակիցների կողմից՝ ելնելով իրենց տեսակետներից՝

1) դեպք վարողի կողմից.
2) ներգրավված մասնագետների կողմից.
3) դիմողի կողմից.
4) դիմողի սոցիալական միկրոմիջավայրի կողմից:

33. Արդյունքների գնահատումը հնարավոր է դիտարկել մասնավորապես հետևյալ շրջանակներում.

1) դիմողի սոցիալական կարիքների, հմտությունների և կարողությունների փոփոխություն.

2) արդյո՞ք դիմողը ձեռք է բերել որոշակի նոր սոցիալական հմտություններ և գիտելիքներ, որո՞նք են դրանք և ինչպե՞ս կարող են օգտակար լինել.

3) դիմողի՝ առկա հանգամանքներին և երևույթներին մոտեցումների փոփոխությունը՝ արդյո՞ք նա փոխել է իր հայացքները կյանքի, իր սոցիալական հարաբերությունների, միջավայրի վերաբերյալ, որո՞նք են դրանք, ինչպե՞ս են դրսևորվում և արդյո՞ք այդ փոփոխությունները կարող են նպաստել նրա սոցիալական կարիքների բավարարմանը.

4) դիմողի վարքագծի փոփոխություն՝ արդյո՞ք նա կամ իր ընտանիքը բարելավել է իր սոցիալական և մասնավոր վարքագիծը, մասնավորապես՝ կատարված փոփոխությունների բնույթը.

5) դիմողի կենսապայմանների փոփոխություն՝ արդյո՞ք նա բարելավել է իր կենսաոճը, արդյո՞ք նրա ոչ ֆորմալ աջակցող ցանցն ավելի լայն է, քան մինչև սոցիալական միջամտությունը:

34. Անհատական ծրագրի գնահատման լրացուցիչ շրջանակներ են՝

1) անհատական ծրագրի իրականացման գործընթացների ֆիզիկական և գործառնական մատչելիությունը (հեշտությամբ հասանելի լինելը)՝ ներգրավված մասնագետների, դիմողների և այլ շահագրգիռ անձանց համար.

2) տեղեկատվության ճիշտ տարածումը և որոշումների կայացումը (ներգրավված մասնագետների, դիմողների և այլ շահագրգիռ անձանց համար).

3) մասնագիտացված ձևակերպումներից (եզրույթներից) հնարավորինս խուսափումը.

4) անհատական ծրագրում դիմողների մշակութային նախապատվությունները և բարոյական պարտականությունները հաշվի առնելու հանգամանքը.

5) անհատական ծրագիրն առանց ժամանակի անհարկի կորստի և ձգձգումների իրականացնելու կամ ժամանակավրեպ լինելու հանգամանքը:

35. Արդյունքների գնահատման նպատակն է ի հայտ բերել դիմողի սոցիալական կարիքների կայունությունը կամ դրանցում գրանցված փոփոխությունները՝ աճի կամ նվազման միտումներով:

36. Սոցիալական ուղեկցման ընթացքում անհատական ծրագրի արդյունքների գնահատականի դրական միտման պարագայում հանդիպումների կազմակերպման հաճախականությունը նվազում է, ընդհուպ մինչև կիսամյակային պարբերականություն:

37. Սոցիալական ուղեկցման, այդ թվում ընթացիկ գնահատման գործընթացներում պետք է ներգրավված լինեն անհատական սոցիալական ծրագրում ընդգրկված բոլոր սուբյեկտները (այդ թվում և դիմողները):

VII. ԴԵՊՔԻ ՓԱԿՈՒՄ

38. Դեպքը փակվում է.

1) դիմողի իրավիճակի կայուն դրական փոփոխության պարագայում՝ սոցիալական խնդիրը լուծված է, դիմողը ձեռք է բերել անհրաժեշտ սոցիալական հմտություններ.

2) դիմողին անհրաժեշտ սոցիալական ծառայությունը տրամադրելու և (կամ) դեպքն այլ կազմակերպության փոխանցելու պարագայում.

3) անցում շարունակական հսկողության՝ գրանցվել է դիմողի վիճակի դրական ոչ կայուն փոփոխություն կամ վիճակն ունի քրոնիկ բնույթ:

39. Դեպքի փակումը չի բացառում դեպքի վերաբացումը՝ տվյալ դիմողի մոտ այլ սոցիալական կարիքներ առաջանալու կամ առկա խնդիրների խորացման պարագայում:

40. Դեպք վարողը դեպքի վերաբացման առաջարկությունը ներկայացնում է իր անմիջական ղեկավարին, որն ընդունում է որոշում դեպքի վերաբացման մասին:

VIII. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՒՄ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

41. Անհատական ծրագրերի կատարման հսկումը կազմակերպում է դեպք վարողի կազմակերպության ղեկավարը կամ ըստ անհրաժեշտության իր կողմից ստեղծված առնվազն 3 աշխատողից բաղկացած հանձնաժողովը՝ հետևյալ ուղղություններով.

1) հաստատված միջոցառումների իրականացման ժամկետների հսկողություն.

2) նյութական և մարդկային ռեսուրսների օգտագործման հսկողություն՝ առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործում մինչև անհատական ծրագրի ավարտը՝ դրանց սպառումից (վատնումից) խուսափելու նպատակով.

3) աջակցող ցանցի անդամ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ պարբերական հանդիպումներ և քննարկումներ՝ իրականացվող աշխատանքներից այդ կազմակերպությունների (նրանց ներկայացուցիչների) բավարարվածության մակարդակը պարզելու նպատակով՝ կարևորելով անհատական ծրագրերում նրանց ունեցած դերակատարումը և մասնակցությունը, ինչպես նաև հետագա համագործակցությունից հրաժարվելու ռիսկը նվազագույնի հասցնելու համար:

42. Անհատական սոցիալական ծրագրի մշտադիտարկումը կատարում է դեպք վարողի անմիջական ղեկավարը սույն կարգի 31-րդ, 32-րդ, 33-րդ և 34-րդ կետերով նախատեսված ուղղություններով՝ դեպք վարողի կամ իր նախաձեռնությամբ, ոչ պակաս քան ամսական պարբերականությամբ:

IX. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄՈՒՄ

43. Դեպքի վարումը սկսելու պահից դեպք վարողը կազմում է առանձին սոցիալական գործ (նաև էլեկտրոնային)՝ ժամանակագրական կարգով դրանում ներառելով տվյալ սոցիալական գործին առնչվող բոլոր փաստաթղթերը (տվյալները):

44. Սոցիալական գործում, ի թիվս այլ փաստաթղթերի (տվյալների) ներառվում են՝

1) դեպքի վարման համար հիմք հանդիսացող համապատասխան դիմումը (բողոքը),

2) տնային այցելություն կատարելու մեթոդական ցուցումների 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված կարգով ձևավորված ընտանիքի անձնագիրը,

3) անհատական ծրագիրը:

45. Դեպք վարողը վարում է սոցիալական գործերի (սոցիալական դեպքերի) հաշվառման գրանցամատյան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

46. Դեպք վարողը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ ապահովելու սոցիալական գործում առկա բոլոր փաստաթղթերի և տեղեկատվության պաշտպանվածությունը պատահական կորստից, դրանք անօրինական օգտագործելուց:

47. Չի թույլատրվում սոցիալական գործում առկա տեղեկությունները դրանց ձեռքբերման նպատակից զատ այլ նպատակներով օգտագործելը, զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ հրապարակելը կամ տարածելը, երրորդ անձին կամ անձանց հայտնի դարձնելը, երրորդ անձանց նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակի կամ անուղղակի ընձեռելը, այն է՝ թույլատրելը, չխոչընդոտելը, կամ նման տեղեկությունների պահպանման կարգի խախտման հետևանքով այն հնարավոր դարձնելը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

X. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԵՊՔԻ ՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԸ

48. Սույն կարգի IX բաժնով սահմանված կարգով կազմված սոցիալական գործում գրանցված բոլոր տվյալները ներառվում են սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգ (այսուհետ՝ ՍԴՎ տեղեկատվական ենթահամակարգ):

49. ՍԴՎ տեղեկատվական ենթահամակարգը Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 6 հավելվածի 1-ին կետով նախատեսված սոցիալական բանկի մաս է:

50. ՍԴՎ տեղեկատվական ենթահամակարգը բաղկացած է 3 հատվածներից՝ ընտանիքների անապահովության գնահատման տեղեկատվական ենթահամակարգ, ընտանիքի սոցիալական կարիքների անձնագիր և անհատական սոցիալական ծրագիր:

51. ՍԴՎ տեղեկատվական ենթահամակարգը գործում է ինտրանետ միջավայրում, սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանների սպասարկման և շահագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած կազմակերպությունում (այսուհետ՝ լիազոր կազմակերպություն) տեղակայված սերվերի վրա:

52. ՍԴՎ տեղեկատվական ենթահամակարգում տվյալները ներառվում են առցանց ինքնաշխատ եղանակով՝ սոցիալական բանկի մաս կազմող մյուս տեղեկատվական ենթահամակարգերից, և (կամ) սոցիալական աշխատողի կողմից:

53. ՍԴՎ տեղեկատվական ենթահամակարգում չափելի տվյալների (ընտանիքների անապահովության գնահատման համակարգ) մուտքագրումը կատարվում է տարածքային մարմնում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N145-Ն որոշման 3-րդ հավելվածի 7-31-րդ կետերով սահմանված կարգով, իսկ տունայցի ժամանակ հավաքագրված տվյալները (դիտարկման և հարցազրույցի միջոցով) նաև տունայց կատարելու ընթացքում՝ դյուրակիր համակարգչային տեխնիկայի՝ պլանշետի միջոցով կամ դրա անհնարինության դեպքում՝ տունայցի ընթացքում կատարված գրառումների հիման վրա՝ տարածքային մարմնում՝ եռօրյա ժամկետում:

54. ՍԴՎ տեղեկատվական ենթահամակարգի անհատական ծրագիրը, ՍԴՎ տեղեկատվական ենթահամակարգ է ներառվում տարածքային մարմնում՝ դեպք վարողի կողմից:

55. Անհատական ծրագրի հատվածը կարող է հասանելի լինել բազմամասնագիտական խմբի անդամների համար՝ տվյալ դեպքի մասով:

56. ՍԴՎ տեղեկատվական ենթահամակարգը շահագործող անձնակազմի յուրաքանչյուր աշխատող ունի տեղեկատվական ենթահամակարգի հետ աշխատանքի իր ծածկագիրը, նշանաբանը և կարգը, որոնցով որոշվում են յուրաքանչյուրի տեղեկատվական ենթահամակարգ մուտքի, անձնական տվյալների պաշտպանության և տեղեկատվական համակարգի շահագործման համար լիազորությունների իր շրջանակները:

57. Տարածքային մարմնի աշխատողն իր ծածկագրով և նշանաբանով մուտք ունի ՍԴՎ տեղեկատվական ենթահամակարգի՝ միայն իր սպասարկման տարածքի շտեմարան:

58. Տարածքային մարմնի աշխատողի ծածկագիրը և նշանաբանը տեղեկատվական ենթահամակարգում լրացնում է տվյալ տարածքում տեղեկատվական ենթահամակարգի պատասխանատու աշխատողը (այսուհետ՝ պատասխանատու աշխատող)՝ ապահովելով յուրաքանչյուր աշխատողի կողմից իր ծածկագրի գաղտնի մուտքագրումը:

59. Պատասխանատու աշխատողն ապահովում է տվյալների ամբողջականության պահպանումը, իրականացնում տեղեկատվական ենթահամակարգի սպասարկման բոլոր գործառույթները՝ համակարգի սպասարկում, նշանաբանների փոփոխություն, հաշվետվությունների կազմում:

60. Պատասխանատու աշխատողի բացակայության դեպքում նրան փոխարինում է տարածքային մարմնի մեկ այլ աշխատող, որի վրա պատասխանատու աշխատողի լիազորությունները դրվում են տարածքային մարմնի ղեկավարի կարգադրությամբ (հրամանով): Փոխարինող պատասխանատու աշխատողը տեղեկատվական ենթահամակարգում աշխատում է հիմնական պատասխանատու աշխատողի նշանաբանով, սակայն

իր ծածկագրով: Ծածկագրի գաղտնի փոփոխությունն ապահովում է պատասխանատու աշխատողը:

61. Պատասխանատու աշխատողի անսպասելի բացակայության դեպքում նրան փոխարինող տեղեկատվական համակարգի պատասխանատու աշխատողի մուտքի թույլտվությունն ապահովում է լիազոր կազմակերպության աշխատողը: Պատասխանատու աշխատողի աշխատանքի վերադարձի ժամանակ հանձնում-ընդունումը կատարվում է սույն կարգով:

62. Տարածքային մարմնի աշխատողներից մեկի բացակայության ընթացքում նրան փոխարինում է տարածքային մարմնի այլ աշխատող, որին այդ լիազորությունները փոխանցվում են տարածքային մարմնի ղեկավարի կարգադրությամբ (հրամանով): Փոխարինող աշխատողն աշխատում է տեղեկատվական համակարգում հիմնական աշխատողի նշանաբանով, սակայն իր ծածկագրով, որի գաղտնի մուտքագրումը տեղեկատվական ենթահամակարգ ապահովում է պատասխանատու աշխատողը:

Հավելված N3
Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2017 թվականի հունվարի 25-ի N 6-Ա հրամանի

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԲԱԺՆԻ) ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ՏՆԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԻ ՄԱՍԻՆ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական աջակցության _____տարածքային գործակալության (բաժնի) սոցիալական աշխատողների կողմից 20 թ. ---------- ամսվա ընթացքում կատարած տնային այցելությունների թվի վերաբերյալ

N	սոցիալական աշխատողի անուն, ազգանուն	սոցիալական աշխատողի ծածկագիր	ՍԱՏԳ(Բ)-ի տեղակայման վայրի համայնքի ներսում (հ/ն) և համայնքից դուրս (հ/դ) կատարած այցելությունների թիվը																																	Ընդամենը
			վայրը	01	02	03	04	05	06	07	08	09	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	թիվ
1			հ/ն																																
			հ/դ																																
2			հ/ն																																
			հ/դ																																
3			հ/ն																																
			հ/դ																																
4			հ/ն																																
			հ/դ																																
	Ընդամենը՝		հ/ն																																
			հ/դ																																

Հաշվետվությունը ստացվում է սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգից: